 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	Խմբագրություն 1	1 / 8

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏՈՒՓԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «_» _____ 200- թ.

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 13.09.1996թ. թիվ 5 որոշմամբ, գրանցման համար 57, վկայական թիվ 0164, հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1), այսուհետ՝ «ԲԱՆԿ», ի դեմս _____ որը գործում է _____

/կանոնադրության, լիազորագրի կամ այլնի/

հիման վրա, մի կողմից, և _____

/պահատուի անունը, ազգանունը

այսուհետ՝ «ՀԱՃԱԽՈՐԴ»

ի դեմս _____

/լիազորված անձի անունը, ազգանունը, /

որը գործում է _____


/կանոնադրության, լիազորագրի կամ սեփական նախաձեռնությամբ/

հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը պարտավորվում է Հաճախորդին տրամադրել արժեքների պահպանության համար հատուկ հարմարեցված պահատուփ, հնարավորություն ընձեռել պահատուփում գաղտնիության պայմաններում անխոչընդոտ ձևով տեղադրել արժեքներ և ապահովել պահատուփերի անձեռնմխելիությունը, իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց:

1.2. Սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդի սպասարկումն իրականացվում է ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում՝ սույն պայմանագրի

 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	Խմբագրություն 1	2 / 8

պահանջներին համապատասխան կահավորված անհատական դեպոզիտային պահատուփերի հատուկ սրահում:

1.3. Հաճախորդին տրամադրվում է թիվ _____ պահատուփը:

2. ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԱՐԺԵՔՆԵՐԸ

2.1. Պահատուն երաշխավորում և հավաստիացնում է, որ անհատական պահատուփը չի օգտագործվի դյուրավառ, պայթյունավտանգ կամ իր բնույթով վտանգավոր այլ գույք, ինչպես նաև շուտ փչացող ապրանքներ պահպանելու համար (ներառյալ չսահմանափակվելով՝ թմրանյութեր, զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր, ռադիոակտիվ նյութեր, սննդամթերք, թունաքիմիկատներ):

2.2. Պահատուն նաև հավաստիացնում է, որ պահատուփում տեղադրվող իրերը (այսուհետև՝ «Արժեքներ») որևէ կերպ կապված չեն հանցավոր գործունեության հետ և պարտավորվում է Պահատուին զերծ պահել Արժեքների հետ կապված ցանկացած պահանջներից և հայցերից:

3. ԿՈՂՍԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հաճախորդն իրավունք ունի.


3.1.1. «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի գործառնական օրվա ընթացքում օգտվել իր անհատական պահատուփից: Պահատուփերի սրահում այլ հաճախորդների գտնվելու դեպքում Բանկը կարող է առաջարկել պահատուփի օգտագործման այլ ժամանակ:

3.1.2. Արժեքներն անձամբ տեղադրել պահատուփում և հանել այնտեղից՝ առանց որևէ մեկի, ներառյալ՝ Բանկի աշխատակցի ներկայության կամ հսկողության:

3.1.3 Բանկից ստանալ անհատական պահատուփի երկակի փակվող կողպեքի մեկ բանալին, որի կրկնօրինակը պահվում է Բանկում՝ Հաճախորդի կողմից ստորագրված/կնքված ծրարում:

3.2. Հաճախորդը պարտավոր է.

3.2.1 Բանկին վարձատրել պահատվության համար՝ սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով՝ պայմանագրի կնքման օրը.

 CONVERSE BANK	<i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i>	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	<i>Խմբագրություն</i> 1	3 / 8

3.2.2. Յուրաքանչյուր անգամ անհատական պահարանը բացելուց հետո ստորագրել Բանկի կողմից տրամադրված անդորրագիրը՝ նշելով անհատական պահարանի սենյակ մուտք գործելու ժամը և օրը.

3.2.3. Մուտք գործել պահատուփերի պահասենյակ միայն Բանկի պատասխանատու աշխատակցի ուղեկցմամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ և պահատուփի բանալին.

3.2.4. Բանկում դեպոզիտներ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ ապահովագրավճար, որը կիրառվում է բանալու կորստի հետ կապված Բանկի վնասները հատուցելու համար.

3.2.5. Պահպանել Բանկի կողմից տրված անհատական բանալին, չկրկնօրինակել այն և սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետը լրանալուն պես բանալին վերադարձնել Բանկին, իսկ բանալին կորցնելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնել Բանկին.

3.2.6. Սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետի ավարտին ներկայանալ Բանկ և ազատել պահատուփը՝ հետ ստանալով պահատուփում գտնվող Արժեքները.

3.2.7. Առանց Բանկի պատասխանատու աշխատակցի թույլտվության չլուսանկարել կամ տեսագրել պահատուփերի սենյակը:


3.2.8. Խստագույնս պահպանել ՀՀ գործող օրենսդրության պահանջները, Բանկի շենքում կարգուկանոնը՝ չխանգարելով վերջինիս բնականոն աշխատանքին:

3.3. Բանկն իրավունք ունի.

3.3.1. Առանց Հաճախորդի համաձայնության Արժեքները ի պահ հանձնել երրորդ անձի, եթե Բանկը ստիպված է եղել դա կատարել հանգամանքների բերումով՝ Հաճախորդի շահերից ելնելով և գրկված է եղել նրա համաձայնությունը հրատապ ստանալու հնարավորությունից.

3.3.2. Սույն պայմանագրով Բանկին վճարվող բոլոր վճարներն ու տույժերը անակցեպտ կերպով գանձել Հաճախորդի բոլոր հաշիվներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխանակում՝ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով.

3.3.3. Բացառիկ դեպքերում, անկախ Հաճախորդի համաձայնության առկայությունից, բացել պահատուփը: Սույն կետի իմաստով բացառիկ դեպքեր են հանդիսանում.

 CONVERSE BANK	<i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i>	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	<i>Խմբագրություն</i> 1	4 / 8

ա/. Սույն պայմանագրի 6-րդ կետով սահմանված կարգով պահատուփի տրամադրման ժամկետի ավարտից հետո Հաճախորդի չհայտնվելը:

բ/. Դատարանի կամ ՀՀ Կենտրոնական Բանկի, ինչպես նաև օրենքի հիման վրա նման լիազորություն ունեցող այլ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պահանջը:

գ/. Բանկի Գործադիր տնօրենի գրավոր հրամանը, եթե կան լուրջ հիմքեր ենթադրելու, որ վտանգված է Բանկի անվտանգությունը:

3.4. Բանկը պարտավոր է.

3.4.1. Արժեքները պահատվության ընդունել քաղաք Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում.

3.4.2. Ապահովել պահատուփի անձեռնմխելիությունը և բացառել երրորդ անձանց կողմից պահատուփի բացման հնարավորությունը:


3.4.3. Յուրաքանչյուր անգամ Բանկի աշխատակցի ներկայությամբ անհատական պահարանը բացելուց հետո Հաճախորդին տրամադրել առանձին սենյակ, իսկ այնուհետև տրամադրել Հաճախորդին համապատասխան անդորրագիր՝ դրանում անհատական պահատեղի սենյակ մուտքի ժամը, օրը նշելու և այն ստորագրելու համար:

4. ԲԱՆԿԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Հաճախորդը Բանկին վճարում է վարձատրություն՝ սույն պայմանագրի 6.1 կետով որոշված ժամանակահատվածի համար՝ Բանկի սակագներով սահմանված չափով, որը կազմում է /նշել գումարը բառերով և թվերով/ ՀՀ դրամ:

4.2. Սույն պայմանագրի 4.1. կետում նշված վարձատրության գումարը Հաճախորդը վճարում է նախքան պահատուփի տրամադրումը՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

4.3. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սույն պայմանագրի 4.1. կետում նշված վճարները՝ նախատեսվող փոփոխությունից առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով Հաճախորդին:

 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	Խմբագրություն 1	5/8

5. ՊԱՀԱՏՈՒՓԻՑ ՕԳՏՎՈՂ ԱՆՉԱՆՑ ՇՐՋԱՆԱԿԸ

5.1. Որևէ այլ անձ իրավունք չունի Հաճախորդի հետ միաժամանակ ներկա լինել պահատուփերի սենյակում, **բացառությամբ ստորև նշված անձանց** (նշել այլ անձանց անուն-ազգանունները և անձնագրային տվյալները):

5.2. Կողմերը սույնով համաձայնում են, որ սույն պայմանագրով Հաճախորդի անունից հանդես գալու համար Հաճախորդի ներկայացուցիչների լիազորագրերը իրավաբանական ուժ կունենան միայն այն դեպքերում, եթե վավերացված լինեն նոտարական կարգով, իսկ արտասահմանում տրված լինելու դեպքում՝ ունեն ասպոստիլ, եթե Բանկն այդպես պահանջի:

5.3. Մասնակի կամ լրիվ իրավահաջորդության և ժառանգման դեպքում իրավահաջորդների կամ ժառանգների իրավունքներն առաջանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Հաճախորդն իրավունք չունի սույն պայմանագրից բխող իր իրավունքները զիջել այլ անձանց:


6. ՊԱՀԱՏՈՒՓԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պահատուփը Հաճախորդին է տրամադրվում -----/նշել ժամկետն օրերով, ամսով, կամ տարով/ ժամկետով մինչև՝ «__» _____ 20__թ.:

6.2. Այն դեպքերում, երբ սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետի ավարտից հետո Հաճախորդը չի ներկայանում Բանկ և չի ազատում պահատուփը, Բանկն իրավունք ունի երկարաձգել պահատուփի տրամադրման ժամկետը, եթե Հաճախորդի հաշիվներին առկա գումարը բավարարում է սակագներով նախատեսված վճարների գանձման համար: Պահատուփի տրամադրման ժամկետը համարվում է երկարաձգված՝ Հաճախորդի հաշիվներից Բանկի վարձատրությունը անակցեպտ գանձելու պահից՝ առանց որևէ լրացուցիչ համաձայնության ստորագրման:

6.3. Հաճախորդն իրավասու է պահատուփը հետ վերադարձնել մինչև սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետը, սակայն առանց ավել վճարված գումարի վերահաշվարկի իրավունքի:

6.4. Սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետի ավարտից հետո Հաճախորդի չներկայանալու դեպքում, երբ պահատուփի տրամադրման ժամկետը 6.2. կետի համաձայն չի

 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	Խմբագրություն 1	6/8

երկարաձգվում, Բանկը գրավոր ծանուցում է ուղարկում Հաճախորդին՝ պահատուփն ազատելու պահանջի մասին: Ծանուցումն ուղարկելուց հետո 30 օր անց Բանկն իրավունք ունի բացել պահատուփը և իր ընտրությամբ՝

ա) ուղղակի վաճառքի կարգով՝ խելամիտ գնով, վաճառել պահատուփում գտնվող գույքը՝ անկախ վերջինիս արժեքից,

բ) պահել պահատուփում գտնվող գույքը՝ մինչև Հաճախորդի հայտնվելը և պահպանության լրացուցիչ ժամկետի համար վճարելը,

գ) պահատուփում վաճառքի ոչ ենթակա գույք (փաստաթղթեր, բանալիներ և այլն) հայտանաբերելու դեպքում այդ գույքն ուղարկել ոստիկանություն կամ Հաճախորդի բնակության/ գտնվելու վայրի տեղական ինքնակառավարման մարմին կամ ոչնչացնել այն:

6.5. Կողմերն ընդունում են, որ պահատուփի տրամադրման ժամկետի ավարտից հետո Բանկը պատասխանատվություն չի կրում պահատուփի պարունակության համար:


6.6. Պահատուփում հայտնաբերված գույքի վաճառքից ստացված գումարից Բանկը պահում է գույքի պահպանության և իրացման ծախսերը՝ մնացած գումարը փոխանցելով Հաճախորդի բանկային հաշվին:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Հաճախորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, որպես սույն պայմանագրով պարտավորությունների կատարման ապահովման միջոց, Բանկը կարող է կիրառել պահատվության հանձնված Արժեքների պահումը:

7.2. Սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետի ավարտին Հաճախորդի չներկայանալու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել տույժ՝ յուրաքանչյուր օրվա դիմաց 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամի չափով, եթե պահատուփի տրամադրման ժամկետը 6.2 կետի համաձայն չի երկարաձգվում:

7.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

 CONVERSE BANK	<i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i>	FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր	<i>Խմբագրություն</i> 1	7/8

7.4. Պահատուփի անհատական բանալին կորցնելու կամ վնասելու դեպքում Հաճախորդի կողմից վճարված ապահովագրական դեպոզիտը չի վերադարձվում:

7.5. Սույն պայմանագրով Բանկի պատասխանատվությունը չի կարող գերազանցել հինգ միլիոն ՀՀ դրամը՝ անկախ պահատուփում առկա գույքի արժեքից: Ուստի Բանկը Հաճախորդին առաջարկում է իր հաշվին ապահովագրել 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը գերազանցող Արժեքները:


7.6. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտականությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8.2. Կողմերը երաշխավորում և հավաստիացնում են, որ սույն պայմանագրի կնքման համար ստացել են իրենց ղեկավարների, վերադաս մարմինների, փոխկապակցված անձանց, պարտատերերի և բոլոր ալ անձանցից պահանջվող թույլտվություններն ու համաձայնությունները և սույն պայմանագրի կնքման ժամանակ առկա չէ որևէ հանգամանք, որը հետագայում կարող է հիմք հանդիսանալ սույն պայմանագրի վավերությունը վիճարկելու համար:

8.3. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

 CONVERSE BANK	<i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i>		FO 72-19-01	
	Անհատական պահատվության պայմանագիր		<i>Խմբագրություն</i> <i>1</i>	<i>8/8</i>

8.4. Կողմերը պարտավորվում են իրենց վավերապայմանների փոփոխության դեպքում երեք բանկային օրվա ընթացքում տեղեկացնել մյուս կողմին:

8.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

8.6. Այն պայմանները, որոնք ներառված չեն սույն պայմանագրում, կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ու իրավական ակտերով:

8.7. Սույն պայմանագրից Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով տարաձայնությունները չլուծվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է գրավոր դիմում ներկայացնել Բանկի Գործադիր տնօրենին՝ նշելով թե որն է Բանկի խախտումը և հիմնավորելով խախտման փաստը: Բանկի կողմից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չստանալու կամ ստացված պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի դիմել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին, եթե պահանջի չափը չի գերազանցում 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամը:

8.8. Սույն պայմանագիրը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՃԱԽՈՐԴ

ԲԱՆԿ

